

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«09» օգոստոս 2018թ. թիվ 6

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ  
2015 ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐԻ  
ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը, 24-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետի 9-րդ ենթակետը, հաշվի առնելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի 2018 թվականի օգոստոսի 9-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, Հիմնադրամի 2017 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սույն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում հատուցման գումարներ վճարել այն զինծառայողներին (Օրենքով սահմանված այլ շահառուներին), որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել 2015 և 2016 թվականներին տեղի ունեցած մարտական գործողությունների՝ մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու արդյունքում:
2. Սահմանել, որ հատուցումները վճարվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից Հիմնադրամ ներկայացված Օրենքի 5-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի թիվ 86-Ն որոշմամբ հաստատված կարգով,

ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով նախատեսված, զինծառայողների և շահառուների պետական կենսաթոշակային ապահովության տեսակների և դրանց շրջանակներում նրանց վճարվող գումարների չափերի վերաբերյալ տեղեկությունների ու փաստաթղթերի հիման վրա:

3. Սույն որոշման համաձայն հատուցման գումարների չափը սահմանվում է Օրենքի համաձայն՝ կախված զինծառայողի զինվորական կոչումից և հատուցման դեպքից: Ընդ որում, Հիմնադրամի կողմից զինծառայողներին կամ Օրենքով սահմանված այլ շահառուներին Օրենքով սահմանված հատուցման գումարներից միանվագ վճարումներ չեն տրամադրվելու, այլ փոխանցվելու են միայն ամսական հավասար վճարումները (անուիտետային վճարներ)՝ հաշվարկված սույն որոշման 4-րդ կետին համապատասխան:
4. Սահմանել, որ զինծառայողներին կամ նրանց շահառուներին վճարվելու է միայն Օրենքի հիման վրա հաշվարկված ամսական անուիտետային գումարի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության շրջանակներում նրանց վճարվող ընդհանուր գումարի դրական տարբերությունը\*:
5. Սույն որոշման 3-րդ կետով նախատեսված ամսական հավասար վճարումները վճարվում են 240 ամսվա ընթացքում՝ սկսած Հիմնադրամի ակտիվների ու պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կողմից հատուցման գումարը վճարելու մասին որոշման ընդունման հաջորդող օրվանից և փոխանցվելու են յուրաքանչյուր ամսվա 1-ին աշխատանքային օրը:
6. Սահմանել, որ անկախ վճարումը փաստացի կատարելու ժամկետից՝ վճարումների հաշվարկման համար հիմք է ընդունվում 2018 թվականի սեպտեմբերի 1-ը:
7. Սահմանել, որ հիմնադրամի կողմից վճարվելու են նաև Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ամսական 100 000 դրամ լրացուցիչ գումարները՝ տվյալ մասով նախատեսված կարգավորումներին համապատասխան:
8. Հիմնադրամի կողմից սույն որոշման հիման վրա առաջին վճարումները ամբողջական կատարելու թիրախ սահմանել սույն թվականի հոկտեմբերի 15-ը:
9. Առաջարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը 2015 և 2016 թվականների՝ սույն որոշման համաձայն հատուցման իրավունք ունեցող անձանց անվանացուցակը և սույն որոշման 2-րդ կետում նախատեսված տեղեկությունները ամբողջությամբ տրամադրել Հիմնադրամին մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը:
10. Առաջարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը, ինչպես նաև շահառուների մասով պետական կենսաթոշակային ապահովության

օրենսդրության մեջ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո 1-ամսյա ժամկետում Հիմնադրամին գրավոր տեղեկացնել սույն որոշման հիման վրա հատուցումներ ստացած զինձառայողների և շահառուների կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության շրջանակներում ստացվող ամսական գումարների չափերը՝ ճշգրտումներ կատարելու նպատակով:

Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Դավիթ Տոնոյան

\* Օրինակ՝ Առաջին կարգի հաշմանդամ սպան, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է ամսական 60 000 դրամ պետական աջակցություն, հիմնադրամից կստանա լրացուցիչ 240 000 դրամ (300 000 - 60 000):